

րուն հետևեցաւ թովմաս Յիսուսի հրամանաւ: Այս պատկերագրութենէն կ'եզրակացնենք թէ Յայսմաւուրքի կամ Յովհաննէս եպօս. Երուսաղէմացիի յիշած ականգութիւնը սխալ տեղեկութեան մը վրայ հիմնուած է: Առիթէն օգտուելով հոս կը դնենք նաև թովմայի առաքելութեան և վկայաբանութեան լատիններէն արձանագրութեանց հայերէն թարգմանութիւնը.

Ա.

Առաջին պնակին շուրջը կը կարդացուի. «Թովմաս զրկուած է հնդիկները քրիստոնեայ դարձնելու. եթէ հաւատացեալները կը փափաքին գիտնալ իր առաքինութիւնները թող ուշադրութեամբ նային ինչ որ հոս քանդակուած է իրենց առջեւ».

Բ.

Պնակին կեդրոնին շուրջը կայ սոյն երկտողը. «Նենգամիտ Մեկտոնը մեծ բարկութեամբ բորբոքած կը հրամայէ սպառնալից սուրով մը կտրել թովմայի գլուխը»:

Գ.

Երկրորդ պնակին շրջանակին վրայ կը կարդացուին այս տողերը. «Այս բաժակը կը փայլի Առաքեալին յաղթանակներուն այս զարդարանքովը»:

Ան ցոյց կուտայ թէ Առաքեալը արժանացած է հաւատքի պսակին, երբ երկարեց իր պարանոցը եւ Տիրոջը համար իր արիւնը թափեց»:

Կեդրոնին շուրջը կայ սոյն երկտողը. «Ժողովուրդին արցունքներուն հետ ողբալով սիրեցեալ